

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՍԱԿ ԿԱՐ ՈՅԻԷ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵ Է ՈՒՂՂԵՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԻՐ Ժ. ՄԻՆՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄեզձԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ՐԱԺԱՆՈՐԳՈՂՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ	
Գահիրէի համար	սարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան 60
» » վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ ԶԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանգ 18
Վեցամսեայ	» 10

ԹՈՒՍՏՈՑ ԵՒ ԿՈՎԱՍՍԻ ԶԱՄԱՐ	
Տարեկան	Բուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԳՈՂՐՈՒ ԿԱՆԵԿ Է
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՆԱԽԲԸ
ԹԵՐԻՆ ՎԱՐՉՈՒՅԵ ԱՆ ՎՐՈՅ Է

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»ի վարչութեան հետեւեալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրաւիրուի Պատ. բաժանորդներուն ուշադրութիւնը:

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-էն ՍԿՍԵԱՎ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔԻ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻՍԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»Ի ԸՆԿԱՍԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԻԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

Այս առթիւ Եգիպտոսի և Արտասահմանի արգոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին վճարել իրենց բաժանորդագրիւնները, նկատելով որ ընկերութեան մը թերթը պահպանելու գլխաւոր միջոցներէն մէկն է բաժանորդներուն կողմէն գրած գործնական քաջալերանքը:

«Նոր Օր»ի վարչութիւնը կը խնդրէ Արտասահմանի ու Կովկասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել իր կողմէն մը «Նոր Օր»ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր Կովկասի հայ թերթերու ու Հանդէսներու Պատ. խմբագիրներէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակեն «Նոր Օր»ի հետ:

ՍՈՒԼԹԱՆԻ ՔԱՆՆԻՅԻՆԳԱՄԵԱԿԸ ԵՒ ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՑ ԲԱՇԱ

Սուլթանի քսանհինգամեկին առթիւ դրդեցու հին և նոր աշխարհի մամուլն. չեղաւ թերթ մը որ լռելեայն անցնէր Սուլթանի յորելեանին վրայ. խմբագիրներն համօրէն ժամադրութիւն ըրին նոյնօրն չափել ձեւու համար, անհամբեր գրիչով, Սուլթանի գործերն թագաւորութեան քսանհինգոր տարիներու ընթացքին մէջ. ոմանք թուեցին իւր հանրօգուտ գործերն առանց բառ մը արտասանելու:

Խժժութեանցը վրայ. ոմանք ընդհակառակն նկարագրեցին միայն Սուլթանի եղեռնագործութեանց չըջանն, արհամարհելով խօսիլ իւր գործերուն վրայ. եղան թերթեր ալ որոնք թուելով հանդերձ իւր գործերն չը զայցան վերջաբանով մը դատապարտել իւր անցեալն, թէպէտ և գերմանական մամուլը ի մասնաւորի «Կազէթ տը Գօլթնը», և մի քանի ֆրանսական թերթեր, Սուլթանի կամքին և քմահաճոյքին ծառայեցուցած ըլլան իւրեանց սիւնակներն, մամուլ մեծամասնութիւնն դատապարտեց ընդ միշտ Սուլթանը իբր ամբաստանեալ ժանտ և անջնջելի անցեալով մը:

Այս վճիռն գոհացում չէր կրնար տալ իւրապէս կօհիլէի յեղափոխական ազատ մտքին. ապստամբեցաւ իւր գրիչն, իւր բոլոր գրական ճիղն թափեց «Լ'Օրօր»ի սիւնակներուն մէջ, ներկայացնելու համար մարդասպանին խժժութեանցը վարձուրի տեսարանը: Եվ թերթի թուրքի կործանումը տարիներու ամիսներու խնդիր է ըսաւ. իսկ թուրքի տեղական լրագիրներն ու փաստաբանները գովաբանեցին այդ Սուլթանն: Այս աղմկալից ձայններուն մէջ գուրս նետուեցաւ Սուլթանի քեռայրն և «Ժէօն Թիւրք»երու առժամեայ Հայրը Տամատ Մահմետ փաշա որ կ. Պոլսէն Եւրոպա փախած էր, ու գեռ չը հասած Աղբաւանդեալ, Սուլթանին զրկեց հետեւալ նամակն իւր քսանհինգամեկին առթիւ, որոյ թարգմանութիւնն հետեւեալն է:

«Պատիւ ունիմ Ձեր վեհափառութեան ծանուցանելու թէ Եթէրի օրէնքն երբէք չը թոյլատրուի որ բռնաւոր թագաւոր մը բարձրանայ յԱթոն խալիֆայութեան իշխելու երկրի մը վրայ. որովհետեւ խալիֆայութեան համար կարգ մը պայմաններ կան առանց որոց թագաւոր մը չը կրնար զինքն խալիֆա հռչակել ժողովրդեան վրայ: Որոնք են այդ պայմաններն: Արդարութիւն, ուղղութիւն, գուրթ և գորով հանդէպ իւր հօտին և ժողովրդեան: Ձեր կայսերական ուշադրութեան կը յանձնարարեմ այս առթիւ վերջերս հրատարակած «Ազայիտ» անուն մի գըրքը:

քոյկս, որոյ մէջ մանրամասնաբար խօսած եմ յիշելով խալիֆայի ծագումն ու այս մասին պատմողէտներու կարծիքներն: Սուլթան մը որ գուրթ է ունենալէ այդ յատկութիւններն, երբէք իրաւունք չունի խալիֆայութեան, ո՛չ ալ գրաւելու այդ աթոնն:

Սակայն և այնպէս, Ձեր վեհափառութիւնն հակառակ այս իրականութեան, այդ աթոնայ լարձուրէն ուր անարժանաբար կոչուած է գահակալելու, կ'աքսորէ, կը բանտարկէ, կը սպաննէ անդադար այն ամեն միւսիւմաններն որոնք ուղիղ կը խորհին ու կը խօսին հրապարակաւ և կամ գաղտնի, որոնք չեն սիրեր խեղկատակութիւնն ինչ ճիւղով. կը գրաւէ Հայուն ինչքն ու ստացուածքն, կը քանդէ ու կ'աւերէ նոցա բնակավայրերն, կը ճնշէ բովանդակ ժողովուրդ մը ծանրաբան տուրքերու ներքե գորհատուցանել սորա կարողութենէ վեր է, կը սակզծէ ամեն օր նորանոր ստուեր, կը կործանէ իւր նաւատորմիւն, կը շահագործէ երկիրն յօգուտ իւր անձնական գանձին, կը բռնաբարէ ժողովուրդի ազատութիւնն, վերջապէս կը դաւէ ու կը դործէ այն ամեն ինչ որ իւր կրօնքին հակառակն է:

Ո՞վ թագաւոր, ի՞նչ համարձակութեամբ կը կատարէք Ձեր քսանհինգամեկի յորելեանի սօնախմբութիւնն, որոյ առթիւ լուսալառութիւններ կ'ըլլան ու յարգանքներ կ'ընծայուին: Ձեր խղճին կը թողում պատասխանել իմ յետագայ երեք հարցմանցս:

Ա. Քաջ գիտնալով որ Ձեր թագաւորութեան քսանհինգոր տարիներն շրջանակի տարիներ եղած են, ի՞նչ իրաւամբ զՁեզ խալիֆա կը հռչակէք իբր յաջորդ Աստուծոյ սիրեցեալն Արաբիոյ Մարգարէին:

Բ. Երբէք ամօթխածութիւն չունիք, Մարգարէին յաջորդելու դատողն ըզբաղիլ:

Գ. Արդեօք կրնաք թուել կայսերական ունէ օրինաւոր արարք մը Ձեր քսանհինգոր տարուան ընթացքին մէջ. կը խնդրեմ որ բարեհաճիք գոնէ խղճի մտք սնունդ մին նշանակել գէթ աւ ի գոհունակութիւն — թերեւ

եղաք և յոյց տաք ինձ Սէլամըքի արարողութիւնն — եթէ այնպէս է, կը հիսնամ ու կ'արգահատիմ. արդեօք ս'ըր տեսնուած է այսպիսի պիղծ արարողութիւններ կատարել և ձեռկերպութիւններ ընել աղօթելու համար առաջի Աստուծոյ:

Տեսնուած է երկիր մը ուր այսքան շուայլ արարողութիւններ կատարուին և ձեռկերպութիւններ ըլլալին թագաւորի մը աղօթած պահուն. այսպիսի արարողութիւններ Աստուծոյ յատուկ են և անոր հասցէին միայն կրնան ուղղուել. ընդհակառակն Գուր կը թոյլատրէք որ ժողովուրդ մը և կամ անթիւ գօրքերու բանակ մը գայ երկրպագելու յոտս Ձեր վեհափառութեան, այն պահուն յորում կ'երթաք դէպ ի մղիլ թագութելու և երկրպագելու առաջի Աստուծոյ: Աւա՛ղ, Տէր թագաւոր, քանի որ Եւրոպայի ունակութեանց հետեւելու և վարժուելու երեկոյթն ունիք, ուրեմն ինչո՞ւ չէք ուզեր օգտուիլ նոցա բարեբերէն ու կ'ընտրէք միշտ ըզչարն. միթէ Եւրոպացիք այդպէս կ'ընեն. թերեւ դիտել տրուի ինձ թէ ինչո՞ւ Անգղիացիք իւրեանց պաշտեցալ թագաւորն յիսնամեակի և կամ վաթսունամեակի յորելեանը սօնեցին այնքան տիեզերահռչակ և պատկառելի յոյցերով: Այո՛, պէտք է ընդունիք թէ հող, այնքան իրատունք ունի թագաւորին, որքան նուիրական պարտք մը ժողովուրդն: Իսկ Գուր ո՞վ թագաւոր, ի՞նչ իրաւամբ սօնել կը բաղձաք Ձեր յորելեանն, քանի որ Ձեր թագաւորութեան քսան և չորս տարիներն աղետից և թշուառութեան տարիներ եղած են այս տարարող ազգին համար, որ ո՛չ թէ Ձեր քսանհինգամեակը սօնէ, ընդհակառակն խորին սգով մէջ թագուած, պէտք է ողբայ միշտ այդ օրն այնքան չարապոյժ: Մէկ կողմէն կ. Պոլսոյ հսկայաչէն քարափունքը Եւրոպացոց կը ծախէք, փոխառութիւններ կ'ընելով, իսկ միւս կողմէն խրոնոյքներ, երեկոյթներ, ընծաներ կուտաք շուայրօրէն. կը նմանիք Պարսից Շահուն որ մեծաքանակ փոխառութեան մը փոխարէն իրաւոր թողուց իւր երկիրն մաքսային եկամուտն:

գումար մը որոյ շնորհիւ կը ճանապարհորդէ այսօր Եւրոպայի ամեն երկիրներն:

Տեսէ՛ք, Չեր Նախահայր Սուլթան Մահմուտ ինչպէ՛ս կըցաւ յայտնի Եւրոպայի երկիրներու խումբն ընկնելու, որոնք պետութեան ամենամեծ պատուհաս եղած էին. Գուր կը ջանացէք ջնջել այդ կեղտոտ և բռնաւոր վարչութիւնն, անոր տեղը մտնելով Եւրոպական արդար և քաղաքակրթեալ վարչութիւն մը. թերևս այն ատեն իրաւունք ունենաք Չեր տարեգարձին առթիւ հանդէսներ տօնելու, և ժողովուրդն ո՛չ թէ այժմու պէս ակամայ, այլ իւր յօժար կամքով ընէ այդ լուսավառութիւններն. ահա՛ մեր ազգի իղձն: Բայց ահա, ցաւօք սրտի կ'ըսեմ թէ Չեր վեհափառութեանը կը սիրէ միայն իւր անձն և այն ամեն ինչ որ կը ծառայէ իւր քմահաճոյից. իսկ կ'ատէ ու կ'արհամարհէ երկրին ու ազգին բարօրութեանը օգտակար ամեն բան:

Արդեօք այսպէ՛ս է Մարգարէին պատուէրը:

Ահա ամբաստանագիր մը զոր կուգայ գրողմը Սուլթանի ճակտին նոյն ինքն իւր ընտանիքի ճամատ Մահմուտ բաշա, որ երանի թէ կուշուած ըլլայ Մուրատ պէյի 1896ի գերը կատարելու: Ահա ձայն մը զոր կը համարձակի բարձրացնել «Եթէ թիւրք» երու Հային, տիեզերական գոռ ու գոչումին մէջ. ձայն մը որ Սուլթանի յորեկանին առթիւ կազմուած տիեզերական հաւաքածոյին մէջ անջնջելի արձանագրութիւն մ'է, ըլլայ նա կեղծ կամ անկեղծ. այսքան չարժուածք մը վերջ մեր յօդուածն կը վերջացնենք, խոտանալով յառաջիկայ թուով յաւելուած մը յորեկանին առթիւ «Սուլթանին յորեկանն և Հայ Տրտունջն» անուան սակ: Ս. Փ.

Ա Չ Ք Ա Յ Ի Ն

ՍՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԱՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՍԵՊՏ. 9Ի ՆՍՏՐ
(Շար. Յախորդ թիւէմ)

Արտաշէս Յովսէփեան. — Անցեալ ամիսները տեղւոյս «Արշալոյս»ին մէջ 15 զրշ. ի խնդիր մը կար կրնամք հասկնալ ճշմարտութիւնը:

Նախագահ. — Գործ. Ժողովոյ Տիար Ատենապետը թո՛ղ հաճի լուսարարել այդ խնդիրը:

Սմբատ Բիւրատ. — Գա զուտ զրպարտութիւն մ'է, Գեղամ Տ. Գրիգորեան անուն անձ մը յերիւրուած: Այդ մարդուն մենք պաշտօն տուած էինք վերին Եգիպտոսի քանի մը հայաբնակ գիւղերէն ու քաղաքներէն ընկերներ բաժանորդագրել ու նպաստներ ժողովել ըստ իւր խնդրանաց: Ահա՛ այդ նըպաստներէն է 15 զրշ. ալ, որ անուած է Երկրէցի երկու ազգայիններէն Յունիարի մէջ, ինչպէս կը հաստատէ յիշատի մէկ նամակը, Գործ. Ժողովոյ ուղղեալ: Սակայն այդ զրա-

(1) Յարութիւն ամիսը զէգճեանի կենսագրութիւնը կարողացողները անշուշտ գիտեն թէ ո՞րքա՞մ մեծ դեր կատարած է այս մշտնաւոր ամձձ՝ Երկրէցիներու բարձրագոյնը մէջ:

մը թուր կը պահէ և 4 ամիսէն, այսինքն Ապրիլ 28ին կը յանձն հօս ընկերութեան հաւաքէ Տիար Խ. Ալթունեանի: Արդ, այդ երանելին, ինչպէ՛ս ընկերութեան շահերուն, կը բողոքէ թէ ինչո՞ւ համար այդ 15 զրշ. չենք անցուցեր մեր 31 Մարտ թուականու ութամսեայ հաշուեկշիւն մէջ:

(Տիար Սմբատ Բիւրատ կը բանայ օրհաս յիստորը, կը կարգայ բարձրաձայն, Ապրիլ 28ին նշանակուած 10 և 5 զր կիրկէյն, երկու ազգայիններէ արուած. ասանք կը հրաւիրէ Տիար Սիմօն Զրովեան, հաշուակալը, կը հարցնէ անոր թէ՛ այդ օրհասին ինչ գրած է, և թէ՛ այդ 15 զր ճիշտ Ապրիլ 28ին յանձնուած էր իրեն):

Սիմօն Զրովեան. — Գեղամ Տ. Գրիգորեան զրպարտութիւնը բրած է, ես ինքս գրած եմ օրհասիւր ծայրէ ծայր. Ապրիլ 28ին զանձուած ստակ մը կարելի էր ի՞նչ արտ 31ի ութամսեայ հաշուեկշիւն անցնել:

Սմբատ Բիւրատ. — Գործ. Ժողովուրդն ինչ զո՞հ պիտի մնար, եթէ ներկայ Պատ. Ժողովականներ զային աչքով տեսնին օրհասին մէջ նշանակուած 15 զրն ու թուականը:

(Այս միջոցին, ժողովականները. ունին զիրենք ու ընկերակիցներ, կարգաւ կուգան կը նային, և այդ ակներև սուտին ու անխիղճ զրպարտութեան վրայ չեն զարմանար, նըկատի ունենալով զրոյն ու այդ չարամիտ զրույթներ հիւրընկալող թերթին բարոյականը):

Արտաշէս Յովսէփեան. — Տիար Նախագահ, քանի որ «Արշալոյս»ի այդ 15 զրշ. զրպարտութիւնը հրապարակու հասկցուեցաւ, ընկերութեան Գործ. Ժողովոյ Պատ. Արտաշէս պատգամ վրայ այս քան ցած օրէն յարձակող Գեղամ Տ. Գրիգորեան անուն անձ, պէտք է պահանջել հրապարակային հերքում իր յիշեալ ստայտ ու անուանակից զրույթան, դարձեալ «Արշալոյս»ի սինակներուն մէջ:

Ե. Արտաշէս. — Այդ անձը, Տիար Սիմօն Զրովեանի ներկայութեան, ինչ ըսած է թէ՛ ինչ կարիք կիրակիին յանձնած էր ստակը, որ կը հանդիպէ ճիշտ Ապրիլ 28ին, ու ես, զիտել սուտ եմ իրեն թէ՛ ինչ գիտնալով զրպարտած էր ուրեմն Գործ. Ժողով մը, որ, մարգարէ պէտք էր որ ըլլար, որպէս զի Ապրիլ 28ին զանձուելիք զրամ մը Մարտ 31ին, այսինքն ամիս մ'առաջ հաշուեկշիւն մէջ անցուցած ըլլար:

Նախագահ. — Պատ, ժողովականք, ինչ կըսէք Տիար Արտաշէս Յովսէփեանի առաջարկին:

Ժողովը բռնէր մեծամասնութեամբ կ'որոշէ որ յաջորդ Գործ. Ժողովը պաշտօնական ազգարարութիւն մ'ուղղէ «Արշալոյս»ի ծանօթ յօդուածագիրին, և յետո կուշուէ պահանջէ հրապարակու:

Տիար Նախագահի առաջարկութեան վրայ այդ խնդիրն ալ փակուեցաւ:

Արտաշէս Մարչեան. — Կը փափաքէի զիտնալ թէ Տիար Սիմօն Զրովեան երբ հըրաւարած է հաշուակալութեան պաշտօնէն:

Նախագահ. — Խօսքը Տիար Սմբատ Բիւրատի է:

Սմբատ Բիւրատ. — Տիար Սիմօն Զրովեան չ'է հրաժարած, ոչ՛ զրաւարակու և ոչ՛ բերանացի, այլ միայն իր ընկերային պարտականութիւնը չ'է կատարած, այսինքն, ամսական բաժանեցիկներն անվճար թողած է:

Նախագահ. — Այնպէ՛ս է Տիար Զրովեանի:

Սիմօն Զրովեան. — Ես մինչև այսօր

չ'մ'հրաժարած, միայն թէ ամսական պարտքերս չ'եմ վճարած:

(Այս պահուն Տիար Արտաշէս Մարչեան յանկարծ ոտքի կու մօտեցաւ Տիար Նախագահին, խնդրեց անդամակցել լսարան—Ընկերացատուն ընկերութեան, ու հօն, անդամակցներուն շարքին մէջ գնտեղեց իր անունը:

Արտաշէս Մարչեան. — Տիար Նախագահ, հակառակորդներու կողմէն կը սնուի թէ՛ ընկ. կանոնագրին յօդուածներուն մէջ ինչ ինչ փոփոխութիւններ մտցուցած են. օրինակի համար, պարբերական հրատարակութիւն երկու բառերը. զորս կըսուի թէ Տիար Սմբատ Բիւրատ վերջէն սարգեցուցեր է կանոնագրին մէջ:

Նախագահ. — Այդ կէտը Տիար Բիւրատ կրնայ լուսարարել:

Սմբատ Բիւրատ. — Տիարք, ինչպէս որ նշանակած եմ Տեղեկագրին մէջ, հիմնական և ներքին կանոնագրիները վերաբննելու նպատակով քանիցս գումարուած խան ժողովոյ նիստերուն մէջ տեսնուեցաւ որ հիմնական կանոնագրի վերաբերեալ յօդուած մը սխալմամբ մտցուած է ներքին կանոնագրին մէջ ու փոխադրածարար: Խան ժողովը, յետ լուրջ քննութեանց, յարմար պահեց այդ երկու կանոնագրիները սրբազնելու պաշտօնը յանձնել Տիար Տօգգ. Բակորեանի և ինձի, ու մենք, կարևոր ու օգտակար բարեփոխութիւններ ընելէ յետոյ, երկու կանոնագրիներն ալ ընդօրինակուած, ներկայեցինք Ընկ. Ժողովոյ արտասովոր նիստին, որ տեղի ունեցաւ Գաղաքիս Ապր—Խալիլ թատրոնին մէջ և ուր Ընկ. Ժողովոյ այն ամանակուան Բ. Ատենապետը Տիար Ե. Քերեստեան հանգիստը կերպով կարգաց այդ երկու կանոնագրիները՝ օրոնք են թարկուելով Ընկ. Ժողովոյ քննութեանը, վերջնական վաւերացման գրուած կրեցին: Հետեապէս, իմ կամ ուրիշ մը կողմէ կանոնագրին մէջ փոփոխութիւններ մտցուած են, այս ինչ կամ այն ինչ հատուածը հանուած կամ աւելցուած է ըսել, պարզապէս խճրճել է բացայայտ ճշմարտութիւն մը:

Նախագահ. — Բանի որ Ընկ. Ժողովը վաւերացուցած է կանոնագրիները, արժէք չունենար որևէ առարկութիւն կամ խճրճանք:

Սահակ Արքայեան. — Դեռ անցեալները Տիար Ե. Քերեստեան Բարեգործական. Ընկ. Սրճարանին մէջ կը յայտարարէր թէ՛ ինչ կանոնագրի կարգացած ատեն բարեմտօրէն, ուշադրութիւն չ'էր դարձուցած պարբերական հրատարակութեան իմաստին:

Արտաշէս Յովսէփեան. — Երկու ամիս առաջ երբ Ազգ. Մանկավարժէն մէջ արտասովոր նիստ մը գումարուեցաւ (նիստ որ լուծուեցաւ անդամներու մեծամասնութիւն չ'զոյնալու պատճառով), Մայր—Գիւնի Բ. Ատենապետ Տիար Ա. Պալեանի երբ հարցուցի թէ ինչո՞ւ թերթ կը հրատարակուի, պատասխանեց ահա՛ Հիմն. կանոնագրին 21-րդ յօդուածը, զոր Գործ. Ժողովը լրագոր իշխանութիւն ունի կէտ առ կէտ գործարկել: Արտեանակ Կոկսանեան. — Եթէ Տիար Ս. Բիւրատ ինչ մտցուցած ըլլայ պարբերական հրատարակութիւն բառերը, որուն շնորհիւ այսօր ունինք «Նոր Օր»ը, պ'փառքն է Լսարան Ընկերացատուն ընկերութեան:

Երուանդ Արագչեան. Տիար Ե. Քերեստեան և թերթին հակառակորդ ուրիշ անդամներ կը խոտովանին թէ այդ պարբերական հրատարակութիւն բառերն ու, ուղիւն օրէն կը գտնուէին կանոնագրին մէջ. սակայն, իրենք, մինչև «Նոր Օր»ի հրատարակութեան օրը, չ'են հասցած թէ պարբերական հրատարակութիւնը «Նոր Օր» թերթ կը նշանակէ: (Գրծագրներ)

(Շարունակելի)

ԴԱՍԱՐԱՆ

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԱՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Այսօրուանէ կ'սկսին գիշերային դասախօսութիւնք, առաջիմ շաբաթը երեք անգամ. երեքշաբթի. հինգշաբթի և շաբաթ օրերը, երկուրորսն ժամը 9 և մինչև 11:

Փափաքողները պէտք է որ գիմեն խմբագրատունն ու արձանագրութիւն:

Ամեն ուսանող որ պիտի հետևի գիշերային դասընթացին, պարտի արձանագրուել, վճարելով նախ 10 զր. ողջ, մուտքի տուրք, և ամեն ամիս 10 զր. ողջ կանխիկ, դասառութեանց համար:

Դասարանին հասոյթը կը վերաբերի ընկերութեան. ուսուցիչներն անձնուիրաբար պիտի դասախօսեն:

ԱՐԵՒԵԼԻԻ ԶԻՆԵՐԸ

Խորամանկութիւն ու անգթութիւն, ահաւասիկ Չինեան յատկանիշը. ասոնք կը բնորոշեն նաև Թուրքերը, Արևելքի այս Զինեքը:

Երկու տխուր դեպքեր, որ նոր տեղի ունեցան Կիլիկիա ու Հայաստան, մեզի կը յիշեցնեն այն հին գասը օսմանցիներուն պատմութեան հանուած, Էնիս բաշային Հաւել պարտուէր, Սրբազնի շարքը:

Էնիս բաշան, Տիգրանակերտի Հայերուն ու Ասորիներուն զահիճը, Սուլթանին սըրտին մօտիկ պաշտօնեայ մ'է: Չեղբի տակէ զրգեց այդ քաղքի մահախաղաղները բողոքեալ Տերութեանց բարեկորդման առաջարկին դէմ, Սասունի շարքերն վերջը: Գաղտնապէս կազմակերպեց Հայոց անհետացումը, ու այս հրեշտային եղբնագործութիւնն արգարացնելու համար, գանձը զրպարտեց իւր թէ միկիթները կոխած ըլլային: Հակաակ ֆրանսական գետնաշարին խիստ ու անպարտու բողոքներուն, այս ձախաւեր ստորհակը տարի մ'ի բուն պահեց իր կուսակալի պաշտօնը: Հրաժարուած 1896 Նոյեմբերին, Կ. Պոլիս բաշուած կը հանգչէր իր արիւնտ զափնիներուն վրայ, որովհետև Ապտիլ—Համիտ կը վախնար գետնաները նեղացնել. այս իշխան թուաւը նրէն գործն ծառայութեան մը կանչելով: Բայց Մեծ—Տէրը կը խորհի այսօր որ չինական տնգնապը կուշուած է անրութեանց բոլոր ուն ուրաշը գրաւելու և շուտով, գողտուկ մը Հաւել կը զրկէ իր արժանաւոր մասգործը: Սակայն հաշուի չէ առած Եւրոպայի աշարլուծութիւնը, որ մէկ աչքով միայն կը քննայ: Չորս գետնաներ բողոքեցին Էնիս բաշայի անուանման դէմ, և միջազգային զօրագնդերուն յաղթական մուտքն ի Բէքին պիտի ներէ գիւնագրութեան բարձր խօսիլ Սուլթանին խորհուրդներուն մէջ:

Եւ սակայն Էնիս բաշան իր ընկերները կ'ընէ, իր նոր սպանդանոցին մէջ: Բացարձակ փոտուութեան արժանի թղթակցութիւններ, Հաւելուն 14 Օգոստ. թուով, զոր մեզի կը բերեն հետեալ տեղեկութիւնները կը յանձնենք տեղեկութեանց ամենալուրջ ուշադրութեան, մանաւանդ ֆրանսականին, որ մասնաւոր իրաւունքներ ու պարտքեր ունի Սիրիա և Կիլիկիա:

«Հաւելուով կը գրենք ձեզի քանի մը մանրամասնութիւններ սալու համար մեր քաղքի արդի կացութեան վրայ:

Չար կ. Պողոսյ թղթակցին համեմատ, Հայկերի նոր կուսակալը Էնիս բաշա, Սուրբաբանէն գաղտնի հրահանգներ ղրկողու նաժ է կիցիկիոյ մէջ հայ սարսր սրկարուցնելու հայրն: Այդ թղթակցից բաշ իրազեկ մ'է. վասնոր, Էնիս բաշային կարգումէն 'ի վեր, Հայկերի կացութիւնը հետըզհետ կը ծանրանայ:

Նախ քանք թէ՛ մեր քաղքի հիւպատոսները, գիտնալով Էնիս բաշային անցեալը, իւրաքանչիւրն իր պետականական դիմաց թախանձելով որ այս կուսորիչը փոխուի, և հրաման ստացան որիկ կերպով անոր հետ երբէք յարաբերութեան չ'մտնել: Ու երբ իր Քէրիմլինը կարգացուելէ յետոյ, Էնիս բաշան շրջաբերական զրկեց հիւպատոսներուն պաշտօնական ընդունելութեան համար, հիւպատոսները ռուսական հիւպատոսարանին թարգմանին պաշտօն տուին նոր կուսակալին յայտնելու թէ՛ բանաւոր պատճառներով, չեն կրնար իրեն այցելութիւն տալ:

Էնիս բաշան Հայկեր տեսակ մը պաշարման միջակի մէջ դրաւ, ուր պահնորդներ կը պատին գիշեր ցերեկ: Քաղաքը նըստող խոր սպանները հրաման ստացան զօրանցիները վերադառնալու, և միևնոյն ատեն գնդերուն ռազմաթիւրը բաշտուեցաւ: Էնիս բաշան կը պնդէ թէ՛ մեր քաղքի քրիստոնեաներն ապստամբիլ կուզեն ('): Ամեն տեղ ու ատեն, միևնոյն կանխագծեալ սուտերը, որոնց չափազանց դիւրահաւան ու կոյր խրոպացիները կը հատարան:

Սարսափը մեծ է Հայկերի մէջ, վասնոր անազնի Էնիս բաշային ու մեր քաղքի հրամանատար Ալի բաշային, — այս վերջինը քաջամասն իր ի ֆրոնտը գործած անգլիութիւններով — ամեն բան կը վախցուի:

Մեր վային բնաւ չը պահեր իր մոլեռանդութիւնն ու իր հակաքրիստոնեայ բղգացումները: Ամենաուղեւորն շինեքն շրջապատուած է ինք: Ունի իսկ իստուհի մէջ իր տեղը փոխեց, կանակը դէպի Մէքքէ չարձնելու համար. հակառակ ասանդական սովորութեան, պատուիրեց կիրայի օրերը չը փակել գատարանները, կն:

(Շարունակելի)

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Երկրագնդին ընդարձակ տարածութեան վրայ, նախնական ժամանակներէ ի վեր, մարդոց համար աշխատութիւնն, բնական և անհրաժեշտ օրէնքի կարգն անցած է. մարդը՝ բանականութեամբ օժտուած՝ կ'աշխատի, գործածելով իր խելքն և ոյժը, իր աշխատութեան ծառայեցնելով նաև յարմարագոյն կենդանիները:

Ապրելու ու ապրեցնելու սահմանուած այս աշխատութիւններով, օրն ի բուն՝ շատ անգամ գիշերն ալ, մարդիկ կը հոգնին ու կը տըխին, որովհետև ընկերային տիրոջ կարգն ու սարքը միջոց չեն հայթայթել ատանց աշխատութեան ապրելու, երջանիկ ըլլալու համար:

Ընտանիք մը ներդաշնակ կառավարուելու համար, անդամներուն մէջ աշխատութեան բաժանումը որովորութիւն ընդունուած է. այր ու կին հաւասար բաժին ունին ասոր մէջ. այրը իր արտաքին աշխատութիւնը իր մտային ու ֆիզիքական ոյժերուն սպառման ծառայեցնելով, իրեններուն առօրեայ ապրուստը կը հայթայթէ. իսկ կինը, անային ընթացիկ գործերով զբաղելով, անոնց երջանիկ ապրելու եղանակները կը պիւրացնէ:

և այդպէս իրենց բաժինը կ'ունենան նաև տանը ֆաշիստ անդամները, որով սահմանուած օրէնքներու հպատակած, պատուաւոր ու երջանիկ կենցաղով մը կը հոյսովն տարիներու ընթացքը, որ աւագ երկվայրկեանի նման վաղանցիկ կը թուի կ'աներուութեանց, անհետացնելով իր հետ ժամանակակից ապրող էակներն ալ:

Բնական բերմամբ թէ՛ անձանթ պատճառներով՝ կը գտնուին ընտանիքներ, որ հակառակ թափուած ամեն գերագոյն ճիգերու, բազմից անխիղճ հարուածներուն մատուցուած, թշուառութեան հրկայեայ ճիրաններուն տակ կը հեծնն ու կը հեծնն, կը հային ու կը մաշին, ժամանակի անպայման տեղադրութեան հետ զուգընթաց, ու չգար օր մը՝ երջանիկ օր մը՝ որ իրենց երկարատե տառապանքին յաջորդող, գոհունակ վիճակով մը կ'ազդուուած, վայելին ամեն բարեքերը գործ բնութիւնն առատօրէն շուսլած է մարդկութեան համար, իսկիստ աշխարհի:

Իսկ շատեր ալ ի սկզբան վարած ճոխ կեանքերէն՝ թէ՛ առած թերի կրթութիւններէն, ապրած միջավայրէն՝ թէ՛ շրջապատուած ընկերներէն, վարժուած՝ ծուլութեան, ու թուլամտութեան, անգիտակ իրենց ներկային, երբէք չեն խորհիր ապագան. այդպիսիք որ գորազարար բազմաթիւ են, առաւօտ կանուխ կը փութան մեկնիլ առնն, և փողոցն են, անգործ ու անպատակ կը քաշնն ու կը քաշնն, ո՛չ կեդրոն անին ոչ հանգրուան, իրենց հանգիստը կը գտնեն արձարաններու մէջ. հոն սուրճի գործը շինն՝ ու կլկակի ծովէն արքշոյ, մտամուր, կուզեն մնալ. դժուար է իրենց բաժնուիլ այդ ֆեասակար միջոցորտէն՝ որուն հոգեով սրտով փարած են. ամենագորտը պատճառներն իսկ ազդեցութիւն չեն բներ իրենց վրայ. իրենց հոգն է թէ՛ ընտանիք հայր, մայր, կամ՝ ըրդ ու եղբայր անթիլ ու անստաղ կը նուազին Հայրենիքը, մատուած վերջին ծայր շրջապատութեան. իրենց փոյժն է թէ՛ այդ անհոգ կեանքին շարունակութիւնն անոնց ալ իսպառ կորտեանը կամ կրօնափոխութեանը պատճառ կը գառնայ. ոչ, անոնք պէտք չեն զգար այդ վիճակները աչքի առաջ ունենալ, իրենք կը գոհանան սուրճի ու կլկակի յարակից նարտով կամ թղթակաղով, որոնք կան ու կան, միշտ ու ամեն տեղ. ու անոնք, գատապարտաբար, ժամերով ու օրերով անընդ անօթի թաղուած այդ ատելի մոլութեան մէջ. ու ասոր բնական հետեւութիւնն ինչ է՝ սեթշուառութիւնը որ իր ահաւոր ուրուականով կը սաւանի, սրճարաններու թոյլ ու ծոյլ մարդուն բնակարանին վրայ, ու կը գտնուի կորտեան անկանայի վիճը, ամեն ինչ, որ պիտի ծառայէ իրեն և իրեններուն երջանկութեանն ու բարօրութեանը:

Ընկերութիւնը պարտականութիւններ ունի դէպի այդպիսիները, որուն լաւագոյն միջոցը ճանչցուած է մամուլը, նա է որ կը սլուլացնէ անոնց սրտին մէջ, դեռ ամբողջովին չը մարած կայծը, կը զարթեցնէ անոց ազնիւ զգացումները կուզէ իտարած քայլերը, և կառաջնորդէ դէպի բարին ու ազնուագոյնը: Ասկէ դատ կան վայրեր ալ որ մտաւորական ու բարոյական զարգացման կը ծառայեն, և ուր կը հաւաքուի հանրութեան քիչ թէ՛ շատ բանիմաց մասը: Ինչո՞ւ զրկուին հոն յաճախելէ նաև այնպիսիք, որոնք սրճարաններուն կայն զոհերը դառնալու վրժազդութիւնն ունեցած են, առաջնորդուիլ պէտք են անոնք ալ՝ հոգեկան ու բարոյական կազդուրիչ, ազգային այդ սրբազան յարկերուն տակ, իսպառ զարթելու համար բարքեր

ապականոց սրճարաններու, նեխած միջոցորտին տակ իրենց թանկագին ժամանակ գոհել:

Մեծ ներգործիչը միջավայրն է, անի էլիլ լաւ է. չ'օրտալէս կ'ազգէ իր նիթակային վրայ, իսկ էթէ գէշ է, անոր հակառակ կարտադրէ, բարեբազարար մենք ունինք հոս հիմակ այգօրինակ օգտակար վայր մը, Լիսարան—Ընթերցատուն մը, բարոյայից միջավայր մը, հոն եղող ընթերցանութիւնները, դասաւանդութիւնները, շահաւէտ վիճարանութիւնները, մտքի ու զգալաբարի սնունդ և հոգեկան ոյժ հայթայթելով կ'օտոնեն մեզ կատարելութիւններով, որոնց պէտք ունինք կեանքի ամենաբուն պայքարը մղելու համար: Ուրեմն ժամանակն է, մկիցի թողունք հանրային կոչուած այն տեղերը, և բոլորինք հաստատութեան մը շուրջը, որու մէջ միայն կարելի է պատրաստել, ու պատրաստուիլ, և ըմբռնել պատուաւոր կեանքի պայմանները, այսպէս թօթափած ըլլալով այն բազմատեսակ մոլութիւնները, կոպիտք դոսերը բանալ նոր և բեղմնաւոր շրջանի մը, որմէ կը սերենք յուսալ ազգային, մտաւորական, ու բարոյական մեծ յեղաշրջումն և պաշտօնի նպատակին իրագործումը:

Երբ կը դրեմ այս տողերը, սրտի անհուն կակիծով կզգամ զբիւս սկիւրութիւնը կենսական հարցի մը — ընթերցասիրութեան — շատագոյնութեան հանգեպ, սակայն միւս կուզմէն ոչ նուազ միլիթարական կը գտնեմ այն բարենշան երևոյթը, որ վերջերս կը տեսնուի հանրային կեանքի մէջ. հետեւաբար իրաւունք ունենալ կը կարծեմ պարծնալու թէ՛ ներկայիս առիթ տուած պիտի ըլլամ ձեռնհաս զբիւնրու, որպէս զի սգանելով արտասահմանի մամոյց ազատութեան, լըրջօրէն յուզեն ու օրուան ինչոր կարծեն հայ երիտասարդութեան վերածնութիւնը, փրկելով զանի վտանգաւոր ունակութիւններէ, սրճարանի և այլ ապստոտութիւններէ, ուղղելով անոր քայլերը դէպի մարքոս փիւրաները լուսաւորութեան ու պարտանախաշակեան. և պատրաստելով զանոնք աւելի վսեմ, աւելի նուիրական կեանքի մը, նպատակի մը, այն է «Ես» ին ազնուացումն, հայրենիքին վերակենդանութիւնը:

Կ. ԱՐԱՅԱՆԻ

ՕՐՈՒՍԱՆ ԼՈՒԻՇԵՐ

ՉԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Կ. ՊՈՒՍԷՆ կը գրեն 12 Սեպտ. թուականով «Այս շաբթու նորէն շատ մը ձերբակալուներ եղան՝ զխաւորապէս Հայրոյ մէջէն. շաբթառիթներն անծանօթ են:

ՀՐԴԵՂ. — Ամսոյս 9ին մեծ հըրդեհ մը ծագեցաւ Ղալաթիա, համազործակցական խնայողական ընկերութեան միջնորդներն անմիջապէս հրոյ ճարակ եղան: Բոցերը խիստ սրագորէն տարածուեցան այդ միջնորդներու մէջ, ամբարտած դիւրաբորբը նիլթերուն պատճառաւ: Կը վախցուի թէ՛ բազմաթիւ զոհեր եղած են: Կը յայտարարուի թէ՛ անգլիական շատ մ'ապահովագրական ընկերութիւններ, ինչպէս նաև բաժնետէրեր, մեծամեծ կորուստներ պիտի կրեն:

ՂԱՉԻ ՄՈՒՍԹԱՐ բաշային ընտանիքը կ. Պոլսէն հասաւ Աղբերանդրիա խտիլիէլ Մէլլի շոգենաւով:

ՄԱՀՄՈՒՏ ԲԱՇԱ ՍՐՏԲԻ, Աղբերանդրիոյ կառավարիչը, որ հինգշաբթի օրը Գահիրէ եկած էր իր քրոջ թաղման հանդիսին ներկայ գտնուելու համար, վերադարձաւ իր պաշտօնատեղին:

ԻՄՄՍԻԼԻՍԻ ՈՂԻՐԸ. — Վելջին պահուն մեր թղթակցէն ստացանք ահուելի ոճրի մը մանրամասնութիւններ, զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

ԿԵՆՈՒԳՐԱԿԱՆ ԲԱՂՈՒՆԱԾԲ

Չինական յուրերը տաղնապայտը կացութիւն մը վաշակել կուտան: Տէրութիւնները ամեն ջանք կ'ընեն ձրմեան իրենց զօրքերը պատասպարելու յարմար շէնքեր գտնելու: Արդիւրած է վաճառու մը կամ վարձակալութիւնը բրիտանական առանձնաշնորհեալ հողին վրայ գտնուող ամեն շէնքերու: Ռուսերը՝ Բէքիւի երկաթուղիին նորոգութիւնը զարկեցուցին, ինչ որ աւելի կը կնճռոտէ կացութիւնը: Գերմանացիք կը ծանուցանեն թէ՛ ամսոյս 13ին Բէքիւի արևմտեան կողմը կուտած են Պորսըրներու ահապին ուժի մը դէմ, ու 20 մարդու կորուստ ունեցած են:

Ռուսերը հետզհետէ կը պակասեցնեն իրենց զօրքերուն թիւը. հինգ զօրաբաժինը արդէն մեկնեցան ու մնացին միայն 8000 զօրք: Գահնակից զօրաց թիւը կը հասնի հիմայ 70000ի:

Ամսոյս 14ին, Թուրքի-Շուրի հարաւարեւելի կողմէ, կատաղի կռիւ մը տեղի ունեցաւ Ամերիկացուց ու 2000 Պորսըրներու միջև:

Պէնկալ Ալեքսանդր անգլիական զօրագունգը հասաւ օգնութեան, Պորսըրներուն վրայ յարձակեցաւ ետեւէն և 200 մարդ սպաննելով անոնց կարգը խանգարեց:

Ամերիկեան հեծելազունը մեկնեցաւ արևմուտքեբրուները, ուր կը գտնուին գետնապանատանց ամբարանցիները: Վատիկանը որոշեց պահանջել Չինէն 60 միլիոն ֆրանքի տուգանք մը, Ֆրանսայի միջնորդութեամբ:

— Բորդուկալի կառավարութիւնը հեռագրով արտօնեց Պ. Բրուկէրի մեկնիլ. բայց պատուիրեց Մօզամպիլի կառավարչին սր ապահով ըլլալ թէ՛ նախկին նախագահն ուղղուի Եւրոպա կ'երթայ: Այդ միջոցին ան պիտի վայելէ Բորթուկալի պաշտպանութիւնը:

Պ. Աւրիթ, Ղէտի պանքի մէջ յանուն ազատական կուսակցութեան պետերուն ճառ մ'արտասանեց, որուն մէջ յատարարեց թէ՛ երկու հանրապետութեանց կցումն անպանաղի էր: Պատերազմը մեր աչքերը բացաւ այն վտանգին վրայ, որով ըիչ մնաց որ կորսնցնէինք Հարաւ-Աֆրիկէն:



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒՍԹԻՍԻ ԺԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը ապուին ՆՈՐ ՕՐ, փիլիսոփայական, հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեատմաներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրեր, նամակազրույցներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր սպագրութեամբ:

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ

Ապօրին Պապ-Ել-Պոսթանէրապարակին վրայ եւ Նուագածուսց խմբի Զօրանցի դիմացը
ՕՂԱՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ
ԴԱՆԷԼ ՀԱՅՍԿՈՐԻՄԵԱՆ ԵՒ ԲՆԿ

Մէկ հասիկ Զօրարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղաւոր մը կարենայ անցընել հաճոյսի ժամանց մը: Ապօրին ընդարձակ հրատարակին զօրագրին օգը, վայրին սքանչելի դիրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶԻՍՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաղթած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկուն, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զօրարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օչարակ ամենէն զբոսարահաճներն անգամ պիտի գոհ մնան եփրասէն:

ՃԱՆԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Նախա Ապու-Սապահ
Նիկու-Տեիվեսի կեղաւանին դիմացը:

Օղատուն ու զուարճալի դիրք մաքուր ու վայելուչ սպաս համեղ ու աննդարար կերակուրներու զանազանութիւն, անխորդալի պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գինով: ան՝ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով՞ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վտահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի գառնայ հայկական ճաշարանին:

ՓԻՒՆԻԿԻ ՎԵՐԵՐԵՒՈՒՄԸ

Կուգանք յայտարարել թէ՛ Եգիպտոսի և թէ՛ արտասահմանի մեր Պատ. բաժանորդներուն, ինչպէ՛ս նաև բոլոր ընթերցասէր սովորներուն թէ՛ «Փիւնիկ» կիսամետայ հանգէտը որ Մ'նտիկեան տպարանին փակման հետեւանքով դադարման դատապարտուած էր անցեալ տարի Նոյ. 15-ին ի վեր, պիտի վերսկսի հրատարակուիլ Տիար Թորգոմ Փափազեանի «Միութիւն» նորակազմ Տպարանին մէջ: «Փիւնիկ»-ի Բ. տարեշրջանը պիտի ըլլի ներկայ Սեպտեմբերի 30-ին, ամսաթիւնով վերածուած, նոյն դիրքով, 24 էջերէ բաղկացած և պարունակութիւնը ճոխացած. լոյս պիտի տեսնէ ամեն ամսոյ վերջը:

Այս առթիւ կը խնդրուի «Փիւնիկ»-ի Ա. տարեշրջանին ամբողջ տարեկան բաժնեգրին վճարող մեր Պատ. բաժանորդներէն, որ հաճին, ի փոխարէն «Փիւնիկ»-ի պակաս մնացած թիւերուն, խմբագրութեանս կողմէն ընդունիլ «Կարմիրն Վարդան» արձակ ու ընդարձակ թատերագրութիւնը, 5 արարէ բաղկացած, որ ի մտոյ լոյս պիտի տեսնէ ՄԻՈՒԹԻՒՆ տպարանէն, ազնիւ թղթի վրայ մաքուր տպագրութեամբ:

Իսկ այն բաժանորդներն — ու դժբաղդաբար մեծ է անոնց թիւը —, որոնք «Փիւնիկ»-ի Ա. տարեշրջանի 14 թիւերն ստացած են ու մինչև ցարգփող մը չեն վճարած, պիտի փութան անտարակոյս զրկել իւրաքանչիւրն իր պարտքը, «Փիւնիկ»-ի հասցէին, որպէսզի մենք ալ համարձակինք իրենց հասցէին զրկել սկսիլ Բ. տարեշրջանի թիւերը:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ	
Եգիպտոսի համար տարեկան զըշ. ողջ	35
» » վեցամս. » »	20
Արտասահմանի համար տարեկան ֆր.	10
» » վեցամս. » »	6
Կովկասի համար տարեկան ռուբլի	4
» » վեցամսեայ » »	2

ՏՅՕՐԷՍ-ԽՈՐԱԳԻՐ
Ս. ԲԻՒՐԱՑ

ԿՈՒԶԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ

ՈՍԿԻ

ԿՈՒԶԷՆ ԼԱՐՈՒՈՂ ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԲՆՏԻՐ

ՃԱՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐԾ. ՎՃՏՐԵԼՈՎ

ԴԻՄԵՏԷ՛Ք

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԴԱՀԻՐԷ, ՄՈՒՍԹԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազիւրամատչելի գներէն սկսելով մինչև աղամանդազարդ: Արծաթ ժամացոյցներ 30 զրուշէն սկսեալ: Նիւրէլ «բոմբ» թուառ ժամացոյցներ 22 զրուշէն սկսեալ: նաև սակի, արծաթ սակեպատ շղթաներ և գոհարեղէններ. ինչպէս նաև պատի և գոնաօրի բազմազան բանախմբեր:

Ամերիկեան նիւրէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 զրուշի անհատապի գնոյ փոխարէն, որոնք լաւ կը բանին:

Ուրեմն գիմեցէ՛ք ուղղակի

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՊԵԼԱՆԱ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՉԱԿԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ

ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ

Ապօրին մեծ պողոտային վրայ Տայիթայի Սանիթի դիմացը, նախկին ելեկտրական գործիներու վաճառատները:

Տպա. «Միութիւն». — Բ. Ս. Փափազեանի

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմնող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն:

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԹ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնուող:

Կը բժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ճրի կը գարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ԶՈՒԼԻԶ-ՄԵԳԵՆԱԳՐՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԻՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԵՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

—X—

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդրէ զանազան գործիներ. սակերու թեան և սրիչ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ևն., յաճախորդները գոհացնող պայմաններով:

Le Gérant J. MUNIER